«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ Աշտարակ համայնքի թ. 3 Հովիկ մանկապարտեզ

Դաստիարակ՝ Հասմիկ Ղափլանյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Ազգային տոներ և ծեսեր 4
Ամանոր. 7
Տեառնընդառաջ. 9
Բարեկենդան. 11
Ծաղկազարդ. 12
Զատիկ. 13
Համբարձման տոն 13
Վարդավառ. 15
Ծեսերը հայոց ավանդական կենցաղում 16
Տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները 17

Եզրակացություն 20
Գրականության ցանկ 21

Ներածություն

Հետազոտական աշխատանքիս թեման է <<Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>: Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի կարևորությունն ու արդիականությունը ազգային արժեքների պահպանման գործում:

Երեխաների աշխարհընկալումն ու տարրական գիտելիքների ուսուցումը սկսվում է կրթականհամակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից: Մանկապարտեզում է ձևավորվում վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, տարբեր երևույթների, շրջապատի և իհարկե ազգային արժեքների նկատմամբ:

Ինչպես գիտենք, մեր երկրում երեխաների մեջ ազգային արժեքների ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում, որպես բովանդակային բաղադրիչ, հաշվի առնելով երեխաների կարողունակությունները, պետք է ունենալ համապատասխան վերջնարդյունքներ:

Ազգային արժեքները կարևոր նշանակություն ունեն եւ ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում: Նրանք են ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության և զարգացման երաշխիքը:

Անձի բազմակողմանի ձևավորման և զարգացման համար կարևոր է նրա արժեհամակարգում բարոյական, գեղագիտական, հոգևոր, մշակութային արժեքների ընկալումը: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական և այլն: Հաշվի առնելով այս բազմաթիվ հանգամանքները, մանկավարժության համար խնդիր է դառնում երեխաների ազգային գիտակցության ձևավորումը, սեփական ժողովրդի պատմության ու մշակութային հենքի վրա:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում: Մանկավարժի առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումը սերմանելն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից:

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ

Հայ երեխայի բարության ու առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է: Հայ երեխային անհրաժեշտ է հայեցի կրթություն ու դաստիարակություն և հայ մանուկներին պետք է դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը և ազգային տոները: Մենք ենք մեր պատմության տերն ու ժառանգորդը, Հայկ Նահապետից մինչև հավերժություն: Մենք պետք է սնվենք մեր ազգային արժեքներից՝ նրանցից վերցնենք ազգային մտածողության շարժառիթներն ու ուղենիշները: Երեխաների աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Երեխաների գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության գործում անգնահատելի նշանակություն ունեն ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք հոգեհարազատ են երեխաներին, քանի որ այս դեպքում նրանք դառնում են մասնակից և կատարող: Ազգային արժեք են նաև ծեսերը: Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի կրոնում, կենցաղում: Այն խորհրդանշական ձևերով վերարտադրում է ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում է ազգի, ժողովրդի միասնականությունը: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնությունների: Հայոց ազգային տոներն ու ծեսերը տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ են ունեցել: Սակայն այդ տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա:

Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչ օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ ու յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես

քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից:

Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ: Այդ տոներից են Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Համբարձումը, Վարդավառը: Ավանդաբար փոխանցվող կրոնանկեղեցական և ժողովրդական տոներն են, որոնք սկզբնավորվել են հիմնականում նախաքրիստոնեական շրջանում և հետագայում հարմարեցվել քրիստոնեական տոնացույցին՝ պահպանելով հնագույն ծիսակարգին ու հավատալիքներին առնչվող մի շարք սովորույթներ և արարողակարգեր: Եկեղեցական տոները նվիրված են Հիսուս Քրիստոսին, Մարիամ Աստվածածնին, Սուրբ Խաչին, սրբերին, ազգային նշանավոր դեմքերին ու իրադարձություններին: Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին անձրևաբեր և անձրևախափան ծեսերը՝ որպեսզի կարողանային ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները:

Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի և կենցաղի վրա: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծեսերը անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս որպե՞ս ստեղծագործ, որպե՞ս գործիչ, որպե՞ս քննադատ: /Ա.Կ.Գեղամյան <<Ծեսը, ծիսակարգը և սովորությունը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ>>:

Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Այն ծեսերը և տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս 100 տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղերում (մասնավորապես Գեղարքունիքի մարզ), մասամբ նշում են Համբարձումը, իսկ Զատկի, Տյառնընդառաջի, Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտամունքին նվիրված հանդիսություններ: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձևավորման շրջանից և պատմության ընթացքում ձևափոխությունների ենթարկվելով մինչև այսօր հնարավորություն են տալիս վերլուծել և թափանցել մեր մշակույթի վաղնջական շերտերը: Ավանդաբար փոխանցվող կրոնանկեղեցական և ժողովրդական տոներն են, որոնք սկզբնավորվել են հիմնականում նախաքրիստոնեական շրջանում և հետագայում հարմարեցվել քրիստոնեական տոնացույցին՝ պահպանելով հնագույն ծիսակարգին ու հավատալիքներին առնչվող մի շարք սովորույթներ և արարողակարգեր: Եկեղեցական տոները նվիրված են Հիսուս Քրիստոսին, Մարիամ Աստվածածնին, Սուրբ Խաչին, սրբերին, ազգային նշանավոր դեմքերին ու իրադարձություններին

ԱՄԱՆՈՐ

Ամանոր Նոր տարին ժամանակագրական առումով առաջին ժողովրդական տոնն է: Մինչև 19-րդ դար հայերը տարվա սկիզբը համարել են Նավասարդը, որը շարժական տոն էր. նշվել է օգոստոսից մինչև հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները: 19-րդ դարում, ըստ Սիմեոն Ա Երևանցու տոնացույցի, Նավասարդը փոխարինվել է Ամանոր/Նոր տարով, որն էլ դարձել է տարվա սկիզբ, ամրագրվել հունվարի 1-ով՝ իբրև անշարժ տոն:

Տոնի անունները հայոց մեջ տարբեր էին՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ: Նոր տարվան նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Իզվլիկ, Գոտեկախ անուններով:

Նոր տարվա նախապատրաստությունները ուտելիքների շուրջն էին: Տոնի ժամանակ օգտագործվող ուտեստի տեսականին, դրանց ծիսական բնույթն ընդհանուր առմամբ նման էին շատ ազգագավառների համար: Նոր տարվա տոնական խնջույքն սկսվում էր

դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Շատ տեղերում այդ օրն այցելություններ չէին լինում, սակայն այդ օրը ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Նոր տարվա սովորություններից կարելի է առանձնացնել նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան տղաների և աղջիկների խմբերի ծիսական շրջայցերը և տոնը շնորհավորելու ավանդույթը: Խմբերը պարելով շրջում էին փողոցներում և որևէ մեկի տանը մոտենալիս սկսում էին երգել: Երգերի տեքստերը պարունակում էին բարեմաղթություններ:

Մանկապարտեզում երեխաները մեծ ուրախությամբ ու խանդավառությամբ են պատրաստվում Ամանորի տոնակատարությանը: Ամանորի նախաշեմին երեխաները պատրաստում են թեմատիկ զարդարանքներ, բամբակյա ձնագնդիներ, բացիկներ, տոնածառի խաղալիքներ, որոնցով հաճույքով խաղում են միջոցառման շրջանակներում:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Այս տոնը ժողովրդի մեջ հայտնի է Տերընդեզ, Տըրընդեզ, Տերինտազ, Տերընաաս, Դառդառանջ, Տանտառեջ, Դոռոնջ, Դոնտառունչ, Տոռոնչ-Տոռոնչ, Տենդառաջ, Դրնդեզ անուններով: Տոնի պաշտոնական Տեառնընդառաջ անունը բացատրվում է Քրիստոսի կենսագրության այն իրողությամբ, ըստ որի, երբ Փրկչի ծնողները նրա ծննդյան 40-րդ օրը նրան տաճար տարան, այստեղ ընդառաջ եկավ Տիրոջ գալստյանն սպասող և խոր ծերության հասած Սիմոն ծերունին, որտեղից էլ առաջացավ Տեառնընդառաջ Տիրոջն ընդառաջ անունը: Տոնական հանդիսությունները, սակայն, ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ վաղնջական պատկերացումների հետ:

Նշվում է փետրվարի 14-ին: Տոնակատարությունը հիմնականում ուղեկցվում էր խարույկներ վառելով և նրա շուրջ ծիսակատարումներով: Խարույկի համար անհրաժեշտ փայտը (անտառազուրկ վայրերում՝ ծղոտը) կուտակելը նշանված կամ նորապսակ երիտասարդների պարտքն էր: Ամենամեծ խարույկը համայնքի ընդհանուր բարեկեցությունը ապահովելու և տարվա առատ բերքի հնարավոր ուղղությունը գուշակելա նպատակն ուներ: Ենթադրվում էր, որ այդ խարույկի ծուխը ուղղվում էր դեպի բերքառատություն խոստացող դաշտերը: Առհասարակ տարածված էր այն պատկերացումը, որ «Տերընդեզի կրակն իր հետ բերում է օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերրիություն և ամուսինների օրհնություն», ինչ վկայվում է նաև խարույկի շուրջ երգվող երգերով:

Տերընդեզ՝ դարմանը ու կես,
Առ հաց ու կես, ելիր գեդես,
Տերընդեզ, մխի (ծխի) դին (կողմը) տես,
Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես:

Մանկապարտեզում մեծ շուքով է նշվում Տյառնընդառաջը: Բակում խարույկ են վառում, երեծաները շուրջպար են բռնում խարույկի շուրջը, երգում ծիսական երգեր, դաստիարակների օգնությամբ ցատկում են կրակի վրայով:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Որպես կանոն՝ Հայ Առաքելական Եկեղեցում Տաղավար տոներին նախորդում են պահոց օրեր:

Սուրբ Ծննդյան տոնի պահքը սկսվում է Սուրբ Ծննդից 7 օր առաջ՝ դեկտեմբերի 29-ի երեկոյան ժամերգությամբ եւ ավարտվում Սուրբ Ծննդյան տոնի նախընթաց օրը՝ հունվարի

5-ի երեկոյան Ճրագալույցի Պատարագով, երբ տրվում է Քրիստոսի Սուրբ Ծննդյան Ավետիսը:

Հայերի մեջ Բարեկենդանը ամենասպասված ու ժողովրդական տոներից մեկն էր: Տոնին պատրաստվում էին ընտանիքի բոլոր անդամները՝ առանց բացառության: Մարդիկ զվարճանում էին, տրվում խրախճանքին ու պատրաստում ճոխ սեղաններ: Նախապատվությունը տրվում էր հատկապես մսեղենին, յուղոտ կերակրատեսակներին ու կաթնեղենին:

«Պահք»-ը պահել բայից է, նշանակում է մասնակի կամ բացարձակ, ավելի կամ պակաս տևողությամբ, հրաժարում, ինքնազրկանք որոշ ուտելիքներից կամ սնունդից: Ի՞նչ է պահքը: Եկեղեցական ավանդության համաձայն՝ երեք տեսակի պահքեր գոյություն ունեն: Առաջինը սովորական պահքն է՝ կենդանական ծագում ունեցող սննդից (բացառությամբ՝ մեղրի) և ոգելից խմիչքներից հրաժարումը: Երկրորդը սրբապահքն է՝ հրաժարումը նաև բուսական ծագման, սակայն ճոխ ու համադամ ուտելիքից՝ ընդհուպ մինչև սոսկ աղուհացով սնվելը: Երրորդը ծոմն է՝ միաժամանակ ընդհանրապես հրաժարումը սննդից և անգամ ջրից:

Պահքի շրջանում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլև մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից և այլ մեղքերից:

Պահքը չի սահմանափակվում միայն կենդանական սննդից հրաժարումով. այն առաջին հերթին հոգեկան ու բարոյական ամեն տեսակի ախտերից ու մոլություններից, մեղանչական մտքերից, խոսքերից ու գործերից մաքրվելն է, զղջմամբ ու ապաշխարությամբ աստվածահաճո և առաքինի կյանքին դառնալը:

Հնուց ի վեր գոյություն ուներ յուրահատուկ օրացույց-շաբաթացույց ՝ Ակլատիզը, հաշվելու համար Մեծ պասի 7 շաբաթները: Բուն Բարեկենդանից անմիջապես հետո Մեծ պասի առաջին օրը, հավի պոչի 7 փետուրները գլուխ սոխի մեջ ամրացնելով պատրաստում էին Ակլատիզ ու գույնզգույն7 թելերի հյուսքով կախում երդիկի խաչքից՝ ճիշտ թոնրի վերևում:

7 փետուրներից 4-ը սպիտակ էին, 3-ը՝ սև:

Սպիտակ փետուրները խորհրդանշում էին ձմռան ձյունը, սևերը՝ գարնան օրերը, երբ երկիրը երևում է սև հողով ու կանաչով, իսկ 7 փետուրները խորհրդանշում են Մեծ պասի 7 շաբաթները: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում, հանում էին մի փետուր: Վերջին՝ 7-րդ փետուրը, հանում էին Զատկի շաբաթ օրը, իսկ արդեն հաջորդ օրը տոնում էին Զատիկը:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծառզարդար, Զըռըզարդար, Ծառկոտրունք, Մեծ պասի 6-րդ կամ Զատիկին նախորդող կիրակի օրն է: Քրիստոնյա այլ ժողովուրդների նման հայերը նույնպես այդ օրը նոր բողբոջած ուռենու ճյուղերով զարդարում են եկեղեցիները և իրենց բնակարանները: Դրանում նրանք տեսնում են մեծ կենսական ուժ և կյանքի շարունակություն: Այդ բողբոջները օգտագործում են բազմաթիվ ձևերով: Այսպես, գիշերը եկեղեցում օրհնված ուռենու ճյուղերը, որոնք «օժտված» էին առատացնող զորությամբ և չարխափան էին, տուն էին տանում, գցում բոլոր մթերքների կարասները, ամբարը, դրանցով թեթևակի խփում անասուններին, միմյանց, հատկապես հիվանդներին, իսկ փոթորկի ժամանակ, խաչաձև դնում էին կրակին վստահ, որ փոթորիկը կավարտվի անմիջապես: Այդ օրվա համար տանտիկինները մեծ քանակությամբ աղանձ էին պատրաստում,

քանի որ կյանքի անընդհատության խորհրդանիշ աղանձը գարնան ավետաբեր ծառզարդի առաջնային ուտելիքն էր: Աղանձ ու ձու էին տալիս նաև այդ կիրակի ուռենու ճյուղեր նվիրաբերելու համար տվյալ տուն այցելած երեխաների խմբերին, որոնք շրջում էին զանազան ճռռացող ինքնաշեն խաղալիքներով, կարկաչաներով, աղմուկով բակերը մտնում և Երգելով շնորհավորում տոնը.

Ծառզարդար, ծառին զարգար,
Խունգ առեք, խունգ ծխեցեք,
Սև հավեն հավկիթ գուզեմ,
Կարմիր կովեն եղ գուզեմ,
Վեվ օր տա՝ շեն մնա,
Վեվ օր չտա՝ չոր չորնա:

ԶԱՏԻԿ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից է: Զատիկը ամենահին և ամենասպասված տոներից է Քրիստոնյա աշխարհում: Բոլորը միմյանց այդ օրը շնորհավորում են՝ Քրիստոս հարյավ ի մեռելոց, օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը: Զատիկ բառին տրվում են տարբեր ստուգաբանություններ: Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է:

Զատիկից առաջ պասի շրջանում հայկական ընտանիքներում սկուտեղի վրա՝ բամբակի բարակ շերտով ցանում են ցորեն կամ այլ սերմ և դնում են այն լուսավոր տեղում,

այնքան մինչև աճում են: Այդ կանաչ բույսը խորհրդանշում է գարունը և բնության զարթոնքը: Խոտի վրա դրվում են ներկված ձվերը և զարդարում են տոնական սեղանը: Մինչ այժմ հայերը պահպանել են ձվերը կարմիր գույնով ներկելու և կորեկ հացի

Աստվածաշնչյան սովորույթը:

Երբ Քրիստոսին խաչել են, նրա մայրը վերցրել է մի քանի ձու և փաթաթել դրանք կտորի մեջ: Երբ մայրը տեսել է իր որդուն խաչված և արյունոտ, նա ծնկի է իջել և լաց է եղել: Մոր արցունքները և որդու արյունը թափվելով ձվերի վրա ներկել են դրանք, իսկ կտորը մայրը գցել է իր գլխին: Այդ օրվանից ավանդական է դարձել կարմիր գույնով ներկել ձվերը, իսկ կանայք գլխաշոր կրել եկեղեցի մտնելիս:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆ

Համբարձում, նշվում է Զատիկից ուղիղ քառասուն օր հետո, հինգշաբթի: Թե՞ տոնի անունը, թե՞ նշելու օրը եկեղեցական օրացույցով բացատրվում է Ավետարանի այն պատմությամբ, ըստ որի Հարություն առնելուց հետո Քրիստոսը քառասուն օր շրջում է երկրի վրա և ապա համբառնում: Այս տոնը երևույթների այն դասական շղթայում է, երբ քրիստոնեությունը ժողովրդական տոները կատարման ժամանակով հարմարեցնում էր քրիստոնեական պաշտոնական գաղափարախոսությամբ պայմանավորված արարողություններին, նախաքրիստոնեական Հայաստանի ժողովրդական կենցաղում կարևոր դեր խաղացող գարնանային վերջին տոնը, փաստորեն կատարման ժամանակով համապատասխանեցվեց քրիստոնեական տոնացույցի Քրիստոսի Համբարձման տոնին:
Ժողովրդական կենցաղում Համբարձման տոնակատարություններն ընթացել են մի քանի օր շարունակ: Տոնի հիմնական սովորույթներն են ծաղկահավաքը, վիճակահանությունը, ուխտագնացությունը, ծիսական ուտեստը: Պատահական չէ, որ Համբարձումից բացի տոնն ունի նաև այլ անվանումներ, որոնք կապված են ծիսական այս բաղադրիչների հետ, ինչպես՝ Ծաղկաքաղի օր, Ծաղիկ գովել, Վիճակի օր, Զանգյուլումի օր, Ճակատագրի տոն, Ծաղկամոր տոն, Կաթ ուտիլի օր, Կաթնապրի տոն և այլն:Տոնի «Վիճակ» անվանումը կապված է սուրբգրային դրվագի հետ, համաձայն որի Հիսուսի Համբարձումից հետո առաքյալները և Նրա հետևորդները մատնիչ Հուդայի փոխարեն վիճակահանությամբ ընտրում են Մատաթիային՝ որպես տասներկուերորդ առաքյալ: Վիճակահանություն կատարվում է նաև ժողովրդական ծիսակարգում, որի հիմնական մասնակիցներն

աղջիկներ են: Ըստ ավանդույթի՝ աղջիկների խումբը Համբարձմանը նախորդող չորեքշաբթի՝ վաղ առավոտյան, մինչև արեգակի ծագելը, անխոս գնացել են դաշտերը, յոթ աղբյուրից՝ յոթ բուռ ջուր, հոսող առվից՝ յոթ քար, յոթ տեսակ ծառից՝ յոթ տերև, յոթ տեսակ ծաղիկ հավաքել և լցրել մի փարչի մեջ: Աղջիկները նաև մի մեծ փունջ են կապել, որը եղել է Ծաղկամերը, և դրել են կճուճի բերանին: Ծաղկահավաքի ողջ ընթացքում տղաների խմբերը հետևել են նրանց՝ փորձելով սրախոսություններով գրավել աղջիկների ուշադրությունը և խախտել լռությունը: Սակայն աղջիկները պետք է լուռ մնային, մինչև իրենց առաքելության ավարտը, վիճակի փարչի նախապատրաստումը: Աստղերը երևալուն պես վիճակի կճուճը թաքցրել են թփերի տակ, ինչը կոչվել է «աստղունք դնել», կամ պահել են աղջիկներից մեկի տանը և հսկել, որ տղաներն այն չփախցնեն: Հինգշաբթի՝ տոնի հիմնական օրը, աղջիկները երգելով շրջել են տնետուն, ծաղկեփնջեր և ջուր նվիրել, իսկ տանտիկինները նրանց տվել են յուղ, ձու և այլ մթերքներ և մեկական իր գցել վիճակի փարչի մեջ:

Աղջիկների նվիրած ջուրն էլ լցրել են խնոցիները՝ առատ կարագ ունենալու ակնկալիքով, առողջանալու հավատով էլ ցողել են մարմնի հիվանդների անդամները: Մեծ ոգեւորությամբ և խանդավառությամբ ենք մանկապարտեզում նշում Սուրբ Զատկի տոնը: Տոնի նախաշեմին երեխաները պատրաստում են զանազան զարդարանքներ:

ՎԱՐԴԱՎԱՌ

Հայկական ավանդական տոների շարքում Պայծառակերպության տոնը խոշոր ամառային տոն է, որը տոնվում է Զատկից 14 շաբաթ հետո: Նախաքրիստոնեական Հայաստանում այս տոնը կապվում էր հեթանոսական Անահիտ աստվածուհու հետ, ում հեթանոսական տաճարն էին գնում երիտասարդներն ու տարեցները ուխտագնացության: Վարդավառ անունը ունի երկու նշանակություն՝ վարդերով վառված և ջուր ցողել: Լեգենդի համաձայն հայկական Աստղիկ աստվածուհին սեր էր տարածում վարդի ջուր ցողելով և վարդեր նվիրելով: Վահագն Աստվածը պահել էր այդ սերը՝ վիշապների դեմ պայքարելով: Տոնը ձևավորվել է քրիստոնեության ընդունումից հետո: Այժմ վարդավառի ժամանակ բոլորը ջուր են ցողում միմյանց վրա վաղ առավոտից, և ոչ ոք չպետք է նեղանա կամ վիրվորվի այդ չարաճճիության համար:

ԾԵՍԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Մշակույթը չէր պահպանվի, և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ:

Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև

ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

Հայ եկեղեցին ծեսը սահմանում է որպես աղոթքի կարգ, որն ունի կարգավորված և ներդաշնակ նկարագիր: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնություններ և քրիստոնեական դավանության: Այդ գործում մեծ ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչ և Ներսես Մեծ կաթողիկոսները:

Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ, որոնցից են Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը, Համբարձումը,Վարդավառը: Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին Անձրևաբեր և Անձրևախափան ծեսերը՝ ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները: Հայտնի են շատ ծիսական երգեր ու խաղեր: Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:

ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայտնի է, որ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի ամենաարդյունավետ ձևը խաղն է, քանի որ այդ տարիքում խաղը նրանց գործունեության հիմնական ձևն է: Խաղը նաև երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է:

Ծեսերը և ծիսական գործողություններն այս տարիքում երեխաների կողմից ընկալվում է որպես խաղ, դերախաղ: Բացի այդ, ազգային ծեսերն ու տոները երեխայի ընտանիքի և համայնքի կյանքի կարևոր ու պարբերաբար կրկնվող երևույթներն են: Երեխան դրանց

առնչվում է նույնիսկ մինչև մանկապարտեզ գալը և անկախ դրանից: Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, որոնք նույնպես նպաստում են երեխայի խոսքի զարգացման հարցմանը: Ծեսն այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն խաղալ ազատ կամ ունենալ դերային խաղեր: Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն:

Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողը ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի, տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում:

Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին: Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու: Այս ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին: Նրանք իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել (այսինքն խաղալ) այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ: Հենց այն ամենը շատ մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքին նպաստող՝ սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև, կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Նախագծի նպատակն է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ

մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:

Ծիսական խաղերը շատ դրական է ազդում նաև երեխայի զգացմունքային զարգացման վրա: Խաղի ժամանակ նրանց մոտ դրսևորվում է վախեր (օրինակ՝ ձուն կռվեցնելու ժամանակ կարող է իր ձուն կոտրվել), հույսեր (որ ամպայման ինքն է հաղթելու), ուրախություն (հաղթելու դեպքում):

Ծիսական խաղը շատ կարևոր ազդեցություն է գործում երեխայի մտավոր զարգացման վրա:Ինչպես գիտենք օրինակ կան բազմաբովանդակ ձվախաղեր ու ընկուզախաղեր, որոնք զարգացնում են երեխայի իմացական հմտությունները:Իմացակն հմտությունների հարցում մեծ նշանակություն ունի նաև երեխաների հետ կազմակերպած երկրագործի աշխատանքները, ինչի շնորհիվ երեխան ձեռք է բերում գիտելիքներ բնության երևույթների մասին և հարստացնում բառապաշարը նոր բառերով: Այդ խաղերի միջոցով նրանք փորձում են կապեր գտնել լսած տեղեկությունների ու կատարած գործուղությունների միջև, ստեղծագործել ու ավելացնել նորը; Նրանք փորձարկում են այդ ամենը և սովորում փորձի ու սխալի միջոցով:Ծիսական խաղը ոչ միայն նպաստում է երեխայի մտավոր զարգացմանը այլև մտածողության և հաղորդակցման համար խիստ կարևոր՝ լեզվական հմտությունների կիրառմանը:

Ազգային ծիսական երաժշտություն

Երաժշտությունը հաղորդակցության համընդհանուր և հզոր միջոց է: Երաժշտությունը մեծապես օգտագործվել է երեխաների հանգստացնելու, սփոփելու, զբաղեցնելու և կրթելու համար: Երեխաներն իրենց էությամբ բնածին երաժշտահաններ են: Սրա հետ համատեղելով ազգային ծիսական երաժշտությունը երեխայի մոտ ձևավորվում է բարձր ճաշակ ու մետեցում հայ մշակույթի արմատներին:

Ծեսերի կազմակերպումը բացօթյա միջավայրում

Քանի որ ազգային ծեսերից շատերը առնչվում են բնության հետ (օրինակ՝ Ծաղկազարդ, Համբարձում և այլն) հիմնականում պետք է կազմակերպվեն բացօթյա միջավայրում: Ինչն էլ իր հերթին նպաստում է երեխայի աճի և զարգացման համար: Երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այդ թվում՝ խոսքային և մտավոր զարգացման մակարդակները, նկատելիորեն առաջադիմում են բացօթյա միջավայրի հետ շփվելու ընթացքում:Երեխայի և բնության հետ ստեղծվում է ներդաշնակ կապ:Ինչպես նաև բացօթյա միջավայրը հզոր միջոց է գեղեցիկն ընկալելու:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.

1. Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկություններից են՝

1. Ազգային մշակույթի պահպանումը
2. Երաժշտական բարձր ճաշակի ձևավորումն ու զարգացումը

2. Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը համախմբում է գաղափարակից մարդկանց, միասնականության շնորհիվ նրանց մտքերն ու գաղափարները իրագործվում են :

3. Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պահանջում են տեխնոլոգիական, երաժշտական, պատմական, լեզվական լրացուցիչ կրթական լուծումներ:

4. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացումը բազմակողմանի է և ազգային ոգով դաստիարակությունը նպաստում է, երեխայի խոսքի և լեզվի, բազմակողմանի մտածողության զարգացմանը:

Գրականության ցանկ

1. Վիքիպեդիա Հայոց ազգային տոներ և ծեսեր

https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D6%87_%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%B8%D5%B6%D5%A5%D6%80

2. Ն. Մովսիսյան <<Տոնացույց>>
3. Ռ. Ռստակյան << Հայկական ծեսեր>>
4. https://siranushbadishyan.wordpress.com/2018/06/09/362/
5. https://tatevsahakyanblog.wordpress.com/2018/06/14/1967/